



**ԾՆՈՂՆԵՐԻՑ (ՈՐՂԵԳՐՈՂՆԵՐԻՑ, ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻՑ) ՄԵԿԻ՝  
ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՅԻՆ ՄԻՆԶԵՎ ՆՐԱ 18 ՏԱՐԻՆ ԼՐԱՆԱԼԸ ԿԱՍ  
ԽՆԱՄԱԿԱԼ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՆՁԻ՝ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ  
ԱՆՁԻՆ ԽՆԱՄԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՐ ՈՐՊԵՍ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՍՏԱԺ  
ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակին ուղղված դիմումներով բարձրաձայնվել է երեխային խնամելու ժամանակահատվածը միայն օրենսդրությամբ սահմանված համապատասխան ստաժի առկայության դեպքում աշխատանքային ստաժում հաշվառելու օրենսդրական խնդիրը:

Անձը՝ մինչև երեխայի երկու տարին լրանալը կամ հաշմանդամություն ունեցող երեխային՝ մինչև նրա 18 տարին լրանալը, կամ խնամակալ ճանաչված անձը՝ առաջին խմբի հաշմանդամություն ունեցող անձի հաշմանդամության ողջ ժամանակահատվածում իրականացնում է անձի խնամքի կազմակերպման աշխատանքներ: Մակայն կենսաթոշակի տարիքը լրանալիս այդ ժամանակահատվածը աշխատանքային ստաժում հաշվառվում է ժամկետային սահմանափակումով և միայն այն պայմանով, երբ անձն ունի անհրաժեշտ աշխատանքային ստաժ:

Հայաստանի Հանրապետությունը դեռևս չի ստեղծել բավարար մեխանիզմներ, որ նմանօրինակ դեպքերում լինեն երեխայի խնամքով զբաղվող համապատասխան կառույցներ, և ծնողին հնարավորություն տրվի գնալու աշխատանքի և ձեռք բերելու անհրաժեշտ ստաժ՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակի անցնելու համար, որպիսի պայմաններում օրենսդրական կարգավորումների միջոցով պետք է երաշխավորվի, որ չաշխատող ծնողները մյուսների հետ հավասար պայմաններում իրացնեն իրենց սոցիալական ապահովության իրավունքը:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ՝ սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժի, իսկ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելիս սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված աշխատանքային **ստաժի առկայության դեպքում** աշխատանքային ստաժում հաշվառվում են նաև (...) 2) **ծնողներից** (որդեգրողներից, խնամակալներից) **մեկի**՝ հաշմանդամություն ունեցող երեխային մինչև նրա 18 տարին լրանալը կամ խնամակալ ճանաչված անձի՝ առաջին խմբի հաշմանդամություն ունեցողին անձին խնամելու ժամանակահատվածը՝ **տասը տարուց ոչ ավելի** (...) 3) ծնողներից (որդեգրողներից) **մեկի**՝ մինչև յուրաքանչյուր երեխայի երկու տարին լրանալը երեխային խնամելու ժամանակահատվածը՝ վեց տարուց ոչ ավելի»:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ «Ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են»:

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ «Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից,



հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք»:

### *Իրավակիրառ պրակտիկայի խնդիրները*

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 9-րդ հոդվածի համաձայն՝ «1. Տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է 63 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 25 տարվա աշխատանքային ստաժ: 2. 63 տարին լրացած անձին տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է նաև 25 տարվա աշխատանքային ստաժից պակաս ստաժի առկայության դեպքում, եթե նա ունի առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ: Սույն մասով սահմանված **10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժում սույն օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ժամանակահատվածները չեն հաշվառվում**»:

Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ՝ սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժի, իսկ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելիս՝ սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված աշխատանքային **ստաժի առկայության դեպքում** աշխատանքային ստաժում հաշվառվում են նաև (...) 2) **ծնողներից** (որդեգրողներից, խնամակալներից) **մեկի**՝ հաշմանդամ երեխային մինչև նրա 18 տարին լրանալը կամ խնամակալ ճանաչված անձի՝ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակահատվածը՝ **տասը տարուց ոչ ավելի (...)**»:

Վերոնշյալ իրավական դրույթների համադիր վերլուծության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է հաշվառել հաշմանդամություն ունեցող երեխային խնամելու կամ 18 տարին լրանալուց հետո՝ առաջին խմբի հաշմանդամություն ունեցող անձին խնամելու ժամանակահատվածը աշխատանքային ստաժում, երբ առկա է 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժը:

Ստեղծված իրավիճակում հաշմանդամություն ունեցող երեխային խնամող ծնողը կամ 18 տարին լրացած առաջին խմբի հաշմանդամություն ունեցող անձի խնամակալը իրենց ամբողջ կյանքը նվիրում են վերջիններիս խնամքն իրականացնելուն և կենսաթոշակի անցնելիս կարող են բախվել էական խոչընդոտների՝ կապված անհրաժեշտ աշխատանքային ստաժի առկայության հետ՝ այն հիմնավորմամբ, որ հաշմանդամություն ունեցող երեխային կամ 18 տարին լրացած առաջին խումբ հաշմանդամություն ունեցող անձին խնամելու ժամանակ փաստացի հնարավորություն չեն ունեցել աշխատելու:

Համեմատության համար հարկ ենք համարում անդրադառնալ խնամատար ընտանիքների համար երեխային խնամելու և դաստիարակելու համար պետության կողմից սահմանված որոշակի երաշխիքների: Մասնավորապես՝ պետությունը որդեգրել է քաղաքականություն, որում կարևորվում է խնամատար ընտանիքներում երեխայի խնամքը



կազմակերպելու անհրաժեշտությունը, որպիսի պայմաններում պետությունը ստեղծել է խնամատար ընտանիքների համար կայուն սոցիալական երաշխիքներ՝ երեխաների խնամքի և դաստիարակության իրականացման համար: Մասնավորապես՝ ՀՀ Կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշմամբ ի թիվս այլոց նախատեսվում է խնամատար ընտանիքների հետ կնքել խնամատարության պայմանագիր, որի գործողության ժամանակահատվածն ամբողջությամբ հաշվառվում է որպես աշխատանքային ստաժ:

ՀՀ Կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշման հավելված 4-ի 11-րդ կետի համաձայն՝ «Երեխային խնամելու և դաստիարակելու համար կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց եկամուտ ստանալու ժամանակահատվածներն աշխատանքային ստաժում հաշվառվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»: Իսկ Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ 2013 թվականի հունվարի 1-ից հետո քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա կատարվող աշխատանքը ևս հաշվառվում է աշխատանքային ստաժում: Այսինքն՝ ակնհայտ է դառնում, որ ի տարբերություն հաշմանդամություն ունեցող երեխային խնամող ծնողի կամ 18 տարին լրացած 1-ին խումբ հաշմանդամություն ունեցող անձին խնամող ծնողի կամ խնամարկյալի՝ խնամատար ծնողը ավելի բարվոք վիճակում է գտնվում այն պատճառաբանությամբ, որ երեխային խնամելու համար վերջիններիս հետ կնքվում են քաղաքացիաիրավական պայմանագրեր, իսկ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում հաշվառվում են 2013 թվականի հունվարի 1-ից հետո քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներից, մատուցվող ծառայություններից եկամուտ ստանալու և այլ գործունեության ժամանակահատվածները (...): Արդյունքում խնամատար ծնողի դեպքում խնամատարության ամբողջ ժամանակահատվածը հաշվառվում է աշխատանքային ստաժում, իսկ հաշմանդամություն ունեցող երեխային խնամող ծնողի կամ 18 տարին լրացած 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձին խնամող ծնողի կամ խնամարկյալի դեպքում երեխային խնամելու ժամանակահատվածը աշխատանքային ստաժում հաշվառվում է միայն համապատասխան ստաժի առկայության դեպքում՝ տասը տարուց ոչ ավել:

Հետևաբար՝ սույն մասով հիմնավորվում է, որ երեխայի խնամքի ժամանակահատվածը աշխատանքային ստաժում հաշվառելու՝ ներկայիս օրենսդրական կարգավորումները որակվում են խտրական և ՀՀ Սահմանադրության հոդվածներին հակասող:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում օգտագործվում է «հաշմանդամ երեխա», «հաշմանդամ ճանաչված անձ», «հաշմանդամ զավակ»: Մարդու իրավունքների միջազգային իրավակարգավորումների համաձայն՝ օգտագործվում է «հաշմանդամություն ունեցող անձ» եզրույթը: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄՄԿ-ի



կոնվենցիայի<sup>1</sup> համաձայն՝ «հաշմանդամությունը էվոյուցիոն երևույթ է, և որ այն արդյունք է այնպիսի փոխազդեցության, որը տեղի է ունենում առողջական խնդիրներ ունեցող մարդկանց և վերաբերմունքի ու շրջապատի սահմանափակումների միջև, որոնք խոչընդոտում են նրանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը հասարակական կյանքում»: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվել է, որ «հաշմանդամություն ունեցող մարդկանց վերաբերող ձևակերպումները խնդրահարույց են վերջիններիս իրավունքների, այդ թվում՝ արժանապատվության հարգման տեսանկյունից», «շարունակվում են օգտագործվել «հաշմանդամ» (...) տերմինները, որոնք համարվում են արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունք, որի պատճառով էլ հասարակությունում ձևավորվում են կարծրատիպեր հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ»<sup>2</sup>:

*Առաջարկում ենք՝*

✓ Հաշմանդամություն ունեցող երեխային խնամելու կամ 18 տարին լրանալուց հետո՝ առաջին խմբի հաշմանդամություն ունեցող անձին խնամելու համար սահմանել աշխատանքային ստաժի հաշվարկման առանձնահատուկ կարգ, մասնավորապես՝ մեկ օրացուցային տարվա խնամքը հաշվառել որպես մեկ օրացուցային տարվա ստաժ:

✓ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը (Կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում հաշվառվում են՝ 1) Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության, գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու (վարձու աշխատանք կատարելու), 2013 թվականի հունվարի 1-ից հետո քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներից, մատուցվող ծառայություններից եկամուտ ստանալու և այլ գործունեության ժամանակահատվածները, ինչպես նաև ԽՍՀՄ տարածքում աշխատանքային և այլ գործունեության ժամանակահատվածները. 2) անհատ ձեռնարկատեր լինելու, որպես նոտար պաշտոնավարելու, արտոնագրային վճար վճարելու ժամանակահատվածները. 3) սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված զինվորական ծառայության ժամանակահատվածը (բացառությամբ ուսումնական հաստատությունում ուսման ժամանակահատվածի). 4) աշխատանքային խեղման կամ մասնագիտական հիվանդության հետևանքով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող՝ հաշմանդամ ճանաչված անձի հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածը՝ մինչև նրա տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը) լրացնել նոր՝ 5-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝ «5) ծնողներից (որդեգրողներից, խնամակալներից) մեկի՝ հաշմանդամություն ունեցող երեխային մինչև նրա 18 տարին լրանալը կամ խնամակալ ճանաչված անձի՝ առաջին խմբի հաշմանդամություն ունեցող անձին խնամելու ժամանակահատվածը՝ մինչև նրա տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը»:»:

<sup>1</sup> UN General Assembly, Convention on the Rights of Persons with Disabilities : resolution / adopted by the General Assembly, 24 January 2007, A/RES/61/106, available at: <https://www.refworld.org/docid/45f973632.html> [accessed 25 May 2020]

<sup>2</sup> Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ, էջ. 4:



✓ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետն ուժի կորցրած ճանաչել (2. Կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ՝ սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժի, իսկ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելիս սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային ստաժում հաշվառվում են նաև՝ (...) 2) ծնողներից (որդեգրողներից, խնամակալներից) մեկի՝ հաշմանդամ երեխային մինչև նրա 18 տարին լրանալը կամ խնամակալ ճանաչված անձի՝ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակահատվածը՝ տասը տարուց ոչ ավելի.):

✓ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում օգտագործվող «հաշմանդամ» բառը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձ» եզրույթով: